

30 JUL 2010

ԲՃ. Բ. ՄՆԼԻՔ-ՍՈՒՍՅԱՆ

(Յեւեղանի տեղաբնակչան կիսնիկայի վարիչ)

ՓՈՔՐԻԿ ԱԿՆԱՐԿ  
ԿՈՒՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

617  
—  
15-48

ՊԵՏՂՐԱՅ. ՅԵՐԵՎԱՆ 1937

27 JUN 2013

7722

617

5-48

այ

ԲՓ. Բ. ՄԵԼԻՔ ՄՈՒՍՅԱՆ

(Յերեվանի ակնաբուժական կլինիկայի վարիչ)

ՄՈՒՍՅԱՆ

ԿԱՆՑԻՔ

Փ Ո Ք Ր Ի Կ Ա Կ Ն Ա Ր Կ  
Կ Ո Ւ Ր Ո Ւ Թ Յ Ա Ն Մ Ա Ս Ի Ն

1010  
5884  
4185

Պ Ե Տ Է Ր Ա Տ Ե Ն Ե Վ Ա Ն 1 9 3 7

## ՓՈՔՐԻԿ ԱԿՆԱՐԿ ԿՈՒՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ուղղեցե՛ք լուսանկարչական ապարատը դեպի ձորեկ մի առարկա և դիտեցե՛ք սև շորի տակից ապարատի հետևի մասի անփայլ ապակին: Դուք այդտեղ կտեսնեք առարկայի փոքր և հակադիր պատկերը: Խնչպես է լինում այդ, առարկայից անդրադարձող ճառագայթները, թափանցելով ապարատի առջևի մասում գտնվող որջեկաթիվի չերկուռուցիկ ապակիների միջով, բեկվում են, ընդունում հակադիր ուղղութիւն և, հասնելով ապարատի անփայլ ապակուն, ընկնում են նրա վրա և կազմում առարկայի հակադիր պատկերը:

Ճիշտ նույնը կատարվում ենաև աչքի մեջ: Լույսի ճառագայթներն, անդրադառնալով աչքի առջև գտնվող առարկայից, ընկնում են աչքի թափանցիկ յեղջերաթաղանթի ջրային հեղուկի, վոսպնյակի և ապակենման մարմնի վրա, այդտեղ լույսի ճառագայթները բեկվում են, ընդունում հակադիր ուղղութիւն, ապա ընկնում աչքի հատակին գտնվող ցանցենու վրա, ուր և կազմում են առարկայի հակադիր փոքրիկ պատկերը:

Համողվելու համար վերցրեք կենդանուց հեռաց-  
ված մի աչք, անջատեցեք նրանից դրսի թաղանթի՝  
սպիտակուցի վրա մի փոքրիկ կտոր, առանց խախտե-  
լու նրա տակ գտնվող աչքի շերտը՝ անոթենին,  
նաև աչքի հատակը կաղմող նրա վերջին շերտը՝ ցան-  
ցենին. յեթե բացած փոքրիկ այդ պատուհանից դուք  
դիտեք, կտեսնեք ցանցենու վրա աչքի առջևը գլա-  
տնվող առարկայի փոքր և հակադիր պատկերը:

Աչքի և լուսանկարչական ապարատի այս նմա-  
նությունը հանրահայտ է, բայց հայտնի յե նաև աչքի ու-  
լուսանկարչական ապարատի հսկայական տարբերու-  
թյունը: Աչքն ոժտված է ընախոսական կարևոր այլ  
հատկութուններով ևս, վորից դուրկ է թեկուզ ամե-  
նակատարելագործված ոպտիկ ապարատը:

Ցանցենին ճառագայթների ընկած վայրում, լույ-  
սի եներգիայի ազդեցության տակ յենթարկվում է  
ֆիզիկո-քիմիական պրոցեսի. դրա շնորհիվ գրգռվում  
են այդտեղ տարածված ներվային ելեմենտները. դրանց  
գրգռն անցնում է ցանցենու մեջ գտնվող ներվային  
թելիկներին, վորոնք հավաքվելով աչքից դեպի ուղե-  
ղը տանող անցքը՝ կազմում են տեսաներվի ամբողջա-  
ցած փունջը:

Այդ ուղիով գրգռը փոխադրվում է գանգուղեղի հա-  
մապատասխան կենտրոնը, ուր և տղավորվելով կազ-  
մում է առարկայի մտապատկերը:

Բնությունը չուր բազմերանգությամբ ըմբռնե-  
լի յե դառնում մարդուն աչքի մի այլ հատկության  
միջոցով, այն է՝ գույների զգացողությամբ:

Պատահում են մարդիկ, վորոնք դուրկ են գույ-  
նազգացումից, մասնավորապես տղամարդկանց մեջ

այդ արատն ավելի հաճախ է պատահում, քան կա-  
նանց մեջ. այդպիսի մարդկանց համար բոլոր առար-  
կաները գորշ են, անգույն, այդ մարդիկ յուրահա-  
տուկ ըմբռնումն ունեն արտաքին աշխարհի մասին:

Հայտնի յե, վոր որգանիզմի և արտաքին աշ-  
խարհի փոխհարաբերությունը կատարվում է մեր  
հինգ զգայարանների միջոցով: Ճանաչել, ըմբռնել  
արտաքին աշխարհը, խորանալ նրա մեջ և այդպի-  
սով յուրացնել արտաքին աշխարհից ամեն ինչ, ոգ-  
տագործել այդ բոլորը կենցաղի բարելավման, գի-  
տակցության և ընդունակութունների զարգացման  
համար— մարդն այդ չի կարող առանց զգայարան-  
ների: Սակայն հինգ զգայարաններից աչքի աշխա-  
տանքը կազմում է բոլոր զգայարանների աշխատանքի  
մոտ 90% -ը. անհա այս հանգամանքը դարձնում է աչ-  
քը զգայարաններից կարևորագույնը:

Դեռևս հնագույն դարերում, կուլտուրայի ու  
կրթության ամենացածր աստիճանների վրա, մարդն  
ըմբռնել և ըստ արժանավույն գնահատել է աչքի նշա-  
նակությունը:

Հինգ հազար տարի մեզանից առաջ, ասորական  
սեպաձև մի արձանագրության մեջ հիշատակված է,  
վոր յեթե բժիշկը մարդու աչքը վոչնչացնի, այսին-  
քըն կուրացնի, պարտադիր է նրա՝ բժշկի ձեռքը կըտ-  
րել\*):

Այժմ մարդկության կուլտուրայի ու կրթու-  
թյան առաջատար յերկրում՝ Խորհրդային Միության  
մեջ առողջության հրատապ ու կարևորագույն խըն-

\*) Ըստ Բելյարմինովի:

գերներից մեկն է հանդիսանում աչքի պաշտպանութ-  
յունը, կուրուսթյան դեմ պայքարելու խնդիրը, վո-  
րին և վերաբերում է մեր խոսքը:

Կուրուսթյունն ունի յուր զանազան աստիճան-  
ները. բացարձակ կուչը ասելով՝ գիտության մեջ  
ընդունված է այն դրուսթյունը, յերբ տեսողություն-  
նից զրկվածը զուրկ է նաև լույսի զգացումից, կամ,  
ինչպես արտահայտվում են, յերբ տեսողությունը  
հավասար է զրոյի, այդ կարգի կուչերն անկարող  
են տարբերել լույսը խավարից: Կուչերի 2-րդ և չա-  
փազանց զգալի քանակ են կազմում նրանք, վորոնք  
թեպետ անկարող են տեսնել, բայց տարբերում են  
լույսը խավարից, զգում են արևի, ճրագի, լապտերի  
լույսը, ունեն, ինչպես արտահայտվում են, լուսա-  
զգացում. այդպիսի կուչերի տեսությունը պայ-  
մանավորված է ընդունել անսահման փոքր մեծու-  
թյուն ( $\frac{1}{\infty}$ ):

Կուչերի մի այլ խումբ են կազմում նրանք,  
վորոնք զգում են միայն մատների շարժումն աչքերի  
առջև. տեսողության այս աստիճանի համար վորպես  
չափ պայմանավորված է ընդունել կոտորակի հազար-  
երորդական մասը:

Կուրուսթյունը կարող է լինել ի ծնե, կամ կյան-  
քի ընթացքում ձեռք բերած: Պատահում են դեպքեր,  
վոր մարդիկ ծնվում են առանց աչքերի. բարեբախ-  
տաբար ի ծնե կուրուսթյան արատը շատ քիչ է լինում:  
Բավականին զգալի քանակ է կազմում ի ծնե կուչերի  
մի այլ խումբը, վորոնք ծնված են արատավոր աչքերով.  
Երբեմն հնարավոր է լինում բուժման միջոցառում-

ներով այդ արատը վերացնել, այն ժամանակ վորոշ  
չափով վերականգնվում է տեսողությունը, բայց հա-  
ճախ չափազանց դեֆեկտիվ աչքի տեսողությունն  
անկարելի յե լինում վերականգնել. այդ տեսակի  
կուչերն ատալինների նման ի ծնե բացարձակ զուրկ  
են տեսողությունից:

Չափազանց մեծ է այն կուչերի թիվը, վորոնք  
ծնվել են միանգամայն առողջ ու տեսողությամբ լը-  
րիվ ոժտված աչքերով, բայց կյանքի ընթացքում հի-  
վանդությունների պատճառով, աշխատանքի աննոր-  
մալ պայմաններում, պատերազմի դաշտում, պատահա-  
կանորեն կամ իրենց անգիտակցության պատճառով  
կորցնում են տեսողությունը զանազան հասակնե-  
րում:

Ի ծնե բացարձակապես կուչերը, կամ նրանք,  
վորոնք չափազանց փոքր հասկում են կորցրել ի-  
րենց տեսողությունը, լինելով նույնիսկ զուրկ լու-  
սազգացումից, գաղափար անգամ չունեն լույսի կամ  
խավարի մասին, բնականաբար զուրկ են տեսնելու  
տեսնանքից:

Նույնիսկ նրանք, վորոնք շատ փոքր հասա-  
կում կորցրել են իրենց տեսողությունը և չերկար  
տարիներ կուչը մնալուց հետո միայն, ոպերացիայի  
միջոցով վերականգնել են իրենց տեսողությունը,  
նրանք շատ հաճախ տեսողությունը վերականգնելուց  
հետո դեռևս չերկար ժամանակ անընդունակ են լի-  
նում տեսած առարկայի պատկերից հա. մապատաս-  
խան մտապատկեր ստանալու:

Չափազանց հետաքրքիր որինակներ է բերում  
այդ մասին պրոֆեսոր Ավիցոնիսը. նա ասում է, վոր

այդ կարգի կույրերը հաճախ ուղեւորացիայից հետո առարկայի մտապատկերն աշխատում են ընդունել միմիայն գույնով. այսպես, որինակ, տեսած լինելով առաջին անգամ սպիտակ բամբակի մի կտոր, դրանից հետո, յերբ նույնպես առաջին անգամ ձուռն են տեսնում, այդ ևս բամբակ են անվանում, կապելով այդ միայն սպիտակ գույնի հետ:

Այս ցույցն է տալիս, վոր առարկայի մտապատկերը կազմելու համար բավական չեն միայն ունենալ ցանցենու վրա ընկած առարկայի հակադիր և փոքր պատկերը, այլ անհրաժեշտ է նաև տեսողական ներքին ու գանգոլեղի միաժամանակ համագործակցութունը. իսկ յեթե դրանք անաշխատության պատճառով անզարգացած են մնում, բնականաբար զուրկ են մնում նաև տեսնելու ընդունակութունից և միայն տարիների ընթացքում վարժության միջոցով վերականգնում են տեսողութունը:

Այս մի ավելորդ անգամ ևս հաստատում է այն, վոր ի ծնե կույրը տեսողության մասին գաղափար անգամ չունի և հոգեպես տանջվել ու տեսնելը չտեսնելուն հակադրել չի կարող:

Ո՞ւմ համար ուրեմն կարող են ամենից ավելի զգալի լինել տեսողության բացակայութունը, ով կարող է ավելի ուժեղ ու տանջալից կերպով զգալ և ապրել կուրութունը. անկասկած նա, ով ծնվել է և ապրել տեսողությամբ ոժտված, ով տարիների ընթացքում ոգտագործել է աչքն իր բոլոր ընդունակութունների զարգացման համար և հանկարծ մի դժբախտ որ զրկվել է տեսողութունից:

Դժբախտաբար հենց այս կարգի կույրերն են,

վոր բոլոր կույրերի շարքում կազմում են ամենամեծ տոկոսը:

Ազգերի կիգայի տվյալների համաձայն կույրերի թիվը յերկրագնդի վրա 6 միլիոն է: Կույրերի թիվը այժմ ամենից շատ է Չինաստանում. այդտեղ, 6 միլիոն մեկ աչքով կույրերից, կան նաև յերեք միլիոն յերկու աչքով կույրեր, իսկ այդ թիվը կազմում է յերկրագնդի բոլոր կույրերի թվի կեսը:

Կուրության տեսակետից 2-րդ տեղը բռնում է Հնդկաստանը, վորտեղ կա 479637 կույր. ապա Յեզիպտոսը՝ 155511 կույր, և այլն (ըստ Սամոյլով-Բրաունշտեյնի):

1926 թ. Համամիութենական ակնաբուժական համագումարում ասած իր խոսքում այն ժամանակվա առժողկոմ պրոֆեսոր Սեմաշկոն ընդգծել է, վոր Միության մեջ կա 500, 000 կույր (ըստ Բելյարմինովի-Մերցի): Այդ կես միլիոն կույրերի 90 տոկոսից ավելին մենք ժառանգել ենք ցարական կառավարութունից: Մինչև 1910 թ. Ռուսաստանում յեղել է, համաձայն այն ժամանակվա վիճակագրական թերի տվյալների, 300,000 կույր (ըստ Գոլովինի): Անկասկած դրանից հետո, մինչև Հոկտեմբերյան հեղափոխութունը, կուրութունն առաջացնող պայմաններն անարգել աճել, զարգացել են, և որ-որի վրա ավելացել է կույրերի թիվը, այդ պատճառներից առաջնակարգ նշանակութուն ունի իմպերիալիստական պատերազմը, վորից ժառանգած կույրերի թիվը չափազանց մեծ է:

Չափազանց հետաքրքրական է կուրության կոնֆիցիենտը (այսինքն կույրերի քանակը յուրաքան-

չյուր 10000 բնակչի մեջ) զանազան յերկրներում։  
Նույն տվյալների համաձայն, բացի Չինաստանից,  
վորտեղ յեղած կուլրերի կոեֆիցիենտի մասին վոչինչ  
չի ասված, Յեզիպտոսում հավասար ե 121-ի, Լատ-  
վիայում՝ 22-ի, իսկ մնացած բոլոր յերկրներում՝ 4-15-ի։

Յարական Ռուսաստանում ըստ պրոֆ. Գուրովի-  
նի տվյալների դեռևս 1910 թ. կուլրության կոեֆի-  
ցիենտը հավասար եր 20-ի։

Կուլրության կոեֆիցիենտը չափանիշն ե հան-  
դիսանում տվյալ յերկրի տնտեսական, կուլտուր-կեն-  
ցադային ե առողջապահական պայմանները։ Գատա-  
հական չե, վոր այս կոեֆիցիենտը Յեզիպտոսում հաս-  
նում ե 121-ի. այդ յերկիրը պատմականորեն հանդի-  
սանում ե տրախոմայի որորանը, կուլրություն առա-  
ջացնող այդ առաջնակարգ հիվանդության հայրենիքը,  
պատահական չե նաև կոեֆիցիենտի 20 արտահայ-  
տությունը ցարական Ռուսաստանում. տնտեսական  
ծանր պայմանները, հակասանխտարական կլանքը,  
բացարձակ հակաառողջապահական պայմանները ցա-  
րական ռեժիմի որով ուժեղ կերպով անդրադարձե-  
ն կուլրերի քանակական աճի վրա։

Կյանքի ընթացքում առաջացած կուլրության  
հիմնական պատճառներ են հանդիսանում (<sup>0</sup>/<sub>0</sub>-ային  
հարաբերությամբ) հետևյալ հիվանդությունները.

- 1| Տրախոմա 21,4 <sup>0</sup>/<sub>0</sub>;
- 2| Գլավկոմա 12,2 <sup>0</sup>/<sub>0</sub>;
- 3| Ծաղիկ 12,0 <sup>0</sup>/<sub>0</sub>;
- 4| Յեղջերաթաղանթի հիվանդություններ՝ 4,9 <sup>0</sup>/<sub>0</sub>;
- 5| Զարգվածքներ (տրավմա) 3,7 <sup>0</sup>/<sub>0</sub>;
- 6| Սիֆիլիս 1,9 <sup>0</sup>/<sub>0</sub> ե այլն (ըստ Գուրովինի)։

Մշտնջենական չեն այս արտահայտությունները  
զանազան յերկրներում։ Ռուսաստանում յեղել են  
նահանգներ, վորտեղից ծաղիկ հիվանդությունը պար-  
բերաբար կլանել ե տասնյակ հազարավոր զոհեր ե  
դրա հետ միասին տվել ե հազարավոր կուլրեր. իսկ  
այն նահանգներում, վորտեղ ծաղիկը քիչ ե արտա-  
հայտվել, բնականաբար կուլրեր քիչ են յեղել։ Մի  
այլ որինակ. Հայաստանում կամ Չուվաշիայում մին-  
չև որս ել արախոման տարածված հիվանդություն  
ե, իսկ մեր հարևան Խորհրդային Վրաստանում նա-  
չափազանց քիչ ե տարածված. հասկանալի յե, վոր թե  
տրախոմայից առաջացած ե թե ընդհանրապես կուլ-  
րերի թիվը, այս իսկ պատճառով, մեզ մոտ կամ Չու-  
վաշիայում ավելի մեծ ե, իսկ Վրաստանում՝ փոքր։  
Կուլրությունն ամենից շատ տեղի յե ունենում մին-  
չեվ 10 տարեկան հասակը. այդ հասակից հետո կու-  
լրության աճման կորագիծն աստիճանաբար ընկնում  
ե ե կրկին բարձրանում ե միայն 40-50 տարեկան  
հասակում. պատահական չե այս յերևույթը. մինչև 1)  
տարեկանը դեռևս անդիտակից հասակ ե՝ պատահա-  
րների յենթակա, հաճախ յենթակա բազմաթիվ  
այնպիսի հիվանդությունների, վորոնք առաջ են բե-  
րում կուլրություն. 40-50 տարեկան հասակում հի-  
վանդություններից գլխավորապես տրախոման ե կու-  
լրություն առաջացնում, վորովհետև այդ հասակում  
նա շատ հաճախ արդեն քրոնիկական բնույթ ունի ե  
հանդես ե դալիս աչքի խնձորի վրա առաջացող կու-  
րացուցիչ բարդություններով։

Այդ հասակի համար բնորոշ են նաև կուլրու-  
թյունն առաջացնող այլ հիվանդություններ, ինչպես,

որինակ, գլավկոման, կատարակտան և ուրիշները:

Հաճախակի չե նաև այս հասակում պրոֆեսիո-  
նալ բնույթ կրող կամ պատերազմից առաջ յեկած  
կուրուժյունը:

Կուրուժյունն առաջացնող հիվանդութիւնների  
ուսումնասիրութիւնը բերում է մեզ այն յեզրակա-  
ցութեան, վոր կուրուժյան դեմ պայքարելու գործում  
նախադրուշացուցիչ (պրոֆիլակտիվ) և բուժական մի-  
ջոցառումներ կիրառելու հնարավորութիւնները չափա-  
զանց մեծ են, ի հարկէ, յեթե դրանց համար կան համա-  
պատասխան նախադրեալներ: Ապացուցված է, վոր  
ցարական Ռուսաստանում կուրերի մոտ 60 օ<sup>0</sup>-ը մի-  
միայն բուժման միջոցառումներով կարելի չեք ա-  
զատել կուրուժյունից, այդ նշանակում է, վոր դեռևս  
1910 թ. լեղած 300,000 կուրերից մոտ 180,000 կա-  
ելի յեր միմիայն բուժելով ազատել կուրուժյունից,  
բայց ցարական կառավարութիւնը վոչ միայն այդ  
չի արել, այլ, ընդհակառակը, իր ամբողջ եյուժեամբ  
նպաստել է, վոր որ-որի վրա կուրերի քանակն ուժեղ  
թափով աճի: Վիճակագրական տվյալների համաձայն  
այն ժամանակվա բնակչութեան յուրաքանչյուր 572225  
հոգուն ընկնում էր միջին թվով մեկ մասնագետ ակ-  
նարուժ (ըստ պրոֆ. Գոլովինի). այդ հանգամանքն  
ակներև ցույց է տալիս ցարական կառավարութեան  
«հոգատար» վերաբերմունքը դեպի բնակչութեան ա-  
ռողջութիւնը:

Սրան գուզընթաց, կուրուրապես հետամնաց մաս-  
սան, գուրկ լինելով ոեալ միջոցառումներից, խտրու-  
թիւն չի դրել միջոցների մեջ՝ իր «աչքի լույսը»  
պահպանելու համար: Այդ պատճառով այն ժամանակ

ամեն տեսակի մութ մարդիկ— «ճեքիմները»— անպա-  
տիժ գործել են և կեղեքել ժողովրդին: Անցյալում  
սովորական յերևույթ է յեղել աչքը բուժել թուքով,  
մեզով, կնոջ կաթով, կղկղանքով, գիր անելու, ֆալ-  
բանալու, ուխտ գնալու, «սրբատեղերը» ծնկաչոք  
պատելու, մատաղ անելու միջոցով, և դրանց նման  
բազմաթիւ տգետ միջոցառումներ գործադրելու համար  
լրենց վերջին կուպեկներն են ծախսել կուրերը պա-  
տահական մարդկանց, յեկեղեցու, յեկեղեցականների  
վրա. կղերն այդտեղ ևս իր առատ հունձն է արել  
թշվառ կուրերի մեջ: Այն ժամանակ ժողովուրդն  
ապրում էր կեղտի, բացարձակ հակասանիտարական  
պայմաններում: Տարիներ առաջ մի կնոջ կուչք աչ-  
քից յես հանել եմ 16 հատ կենդանի վորդ: Տիրող  
բացարձակ անմաքրութեան պատճառով, ճանճերը  
բուն ելին դրել կուրացած աչքում ու վորդ գցել,  
ճիշտ այն վորդերից, վորոնք լինում են նեխած մսի  
վրա, կամ ամառվա շոգերին՝ բաց արտաքնոցներում:

Կալ սնունդ գտնելով վակ կուպերի տակ յեղած  
առատ լորձունքում՝ նրանք փարթամ աճել էին ու-  
վինտի նման խրվել մսի մեջ. յերբ յես իմ կանգնած  
դիրքից նրանց գցում էի հատակին դրած թասի մեջ,  
նրանք արագորեն շարժվում ելին: Այս մի աչքով  
կուր կինը գաղափար անգամ չուներ տարրական  
մաքրութեան մասին. նա գուցե և չգար ինձ մոտ,  
յեթե չզգար իր աչքում շարժվող վորդերի ներկայու-  
թիւնը, վորոնք մի կողմից բորբոքել ոււցրել էին-  
նրա կուպերը ու ցավ առաջացրել, իսկ մյուս կող-  
մից, արագ շարժումներով ճեղքում էին մարմինը՝  
ներս խրվելու համար:



Անձնական անմաքրության այդ տիպիկ որը-  
նական այսօր գուցի առասպելական մի պատմվածքի  
յե նման՝ մեր յերեխաների համար, բայց անցյալում  
այդ սովորական յերեւոյթ եր. իսկ այնտեղ, ուր  
անմաքրությունը, հակասանխտարական պայմաններն  
են իշխում, այնտեղ և անպատիժ հիվանդություններ  
են ընդհանրապես բուն դնում և մասնավորապես՝ աչ-  
քի հիվանդությունները, վորոնք մեծ մասամբ տա-  
նում են մաքրուն դեպի կուրություն:

Կուրությունը հիմնականում իր ահուկի չափե-  
րով ցարական դատան բեժիմի ծնած ու սնած մեծ  
դժբախտություններից մեկն է. ահա թե վնասելից,  
յե՛րբ և ի՛նչ պատճառներով ենք մենք ժառանգել  
կուրերի ալդ հակայական թիվը, կուրություն առա-  
ջացնող ուժեղ նախադրյալները, վորոնց արմատա-  
խիլ անելը մեկ որվա գործ է:

Խորհրդային կառավարությունը ժողովուրդների  
ազատագրման՝ Հոկտեմբերյան հեղափոխության հենց  
առաջին օրվանից հատկապես շեշտ դրեց մասսաների  
առողջապահական խնդիրների վրա, արմատապես փոխ-  
վեցին ժողովրդի սոցիալական ու տնտեսական պայ-  
մանները: Տնտեսականի բարելավման գուզնութաց ու-  
ժեղ կերպով բարձրացավ նաև մասսաների կուրտուր-  
կրթական մակարդակը և այսպիսով հնարավորություն  
ստեղծվեց սան, լուս. գարգացման, պրոֆիլակտիկ  
միջոցառումների, բուժական գործի համար:

Վերջերս մեզ մոտ շրջաններում տրախոմայի դեմ  
կազմակերպված բժշկական բրիգադների աշխատան-  
քը ցույց է տալիս, թե ինչպիսի առատ հող է ստեղծ-  
ված, բացի բուժման միջոցառումներից, հիվանդու-

թյունների դեմ նախազգուշացման աշխատանքներ  
տանելու ասպարիզում: Զրուցյների ժամանակ բժշկի  
յուրաքանչյուր խոսքն այսօր չափազանց մեծ հետա-  
քրքրությամբ կլանվում է ուկնդիրների կողմից, հա-  
զարավոր հարցերի տարափ է առաջ գալիս անձնա-  
կան ու մասսայական նախազգուշացման միջոցա-  
ռումների շուրջը:

Այսօր «հեքիմները» հեշտությամբ չեն կարող  
այլևս ժողովրդին խաբուսիկ հույսերով գրավել ու  
կեղեքել:

Այժմ մի քանի տեղեկություններ տանք կու-  
րություններն առաջացնող հիվանդությունների մա-  
սին:

Այս շարքում առաջին տեղն է բռնում տրա-  
խոման: Չափազանց մեծ է տրախոմայով հիվանդների  
քանակը, մեզնում՝ Հայաստանում նա տասնյակ հազա-  
րից ավելի յե:

Գիտական տվյալների համաձայն չբուժվող, կամ  
անկանոն բուժվող տրախոմայի ժամանակ յուրա-  
քանչյուր 100 հիվանդից մեկը կուրանում է. ալդ  
հաշվով մեզ մոտ միայն տրախոմայից առաջացած  
կուրերի թիվը չափազանց մեծ է:

Ահա պատճառը, թե ինչու՞ վերջերս Առժողկո-  
մատը հատուկ ուշադրություն է դարձրել շրջաննե-  
րում տրախոմայի դեմ մղվող պայքարի վրա: Շըր-  
ջաններն են ուղարկվում մասնագետ ակնաբուժնե-  
րից կազմված բրիգադներ, վորոնք կատարում են հե-  
տադոտական, բուժական և պրոֆիլակտիկ աշխատանք-  
ներ. այդ աշխատանքը ծավալվելով՝ ընդգրկելու յե  
Հայաստանի բոլոր շրջանները: Մեր ուսումնասիրու-

թյունները համաձայն Հայաստանի տարբեր շրջաններում տրախոման տարբեր կոնֆիցիենտով և արտահայտված. նա տատանվում է 50-ի և 800-ի մեջ: Անկասկած, ակնարոժ մասնագետների քիչ լինելը հնարավորութունն չի տալիս տրախոմայի դեմ ել ավելի ուժեղ պայքարելու. այդ խնդիրը հրամայողական պահանջ է դնում կազմեր պատրաստելու, մի գործ, վորի համար քիչ անելիք չունի մեր ակնարոժական կլինիկան: Այդ իսկ պատճառով այսօր յուրաքանչյուր բժիշկ, վորն աշխատում է շրջաններում, մասնավորապես տրախոմայով ավելի վարակված շրջաններում, պարտավոր է, անկախ իր մասնագիտութունից, լավ իմանալ նաև տրախոման և նրա դեմ մղվելիք պայքարի միջոցառումները:

Կուրուլթյունն առաջացնող հիվանդութուններից առաջնակարգ տեղ է ընճում նաև ծաղիկը, ապա յեղջերաթաղանթի թարախոտ հիվանդութունները: Ծաղկի դեմ ամեն տարի կատարվող մասսայական պատվաստումները հանդիսանում են ծաղկի նախագրուշացման ամենալավ միջոցը. այսօր շնորհիվ այդ հանգամանքի մեզ մոտ բացառիկ է ծաղկից առաջացած կուրուլթյունը. սակայն այդ հիվանդութուններից առաջացած կուրյերի քանակն անցյալում չափազանց մեծ է չեղել:

Քիչ չեն նաև այն դեպքերը, յերբ կուրուլթյունն առաջանում է յեղջերաթաղանթի բորբոքումից, մասնավորապես յերեխայի ծննդյան ժամանակ մոր սուսանակից առաջացած վարակից. այսօր հնարավորութուն է ստեղծվել նախագրուշացումով կանխել այդ

հիվանդութունը, յեթե նույնիսկ մայրը վարակված է նրանով:

Յեղջերաթաղանթի հիվանդութուններից առաջացած կուրության դեպքում այն ծածկվում է թանձր. սպիտակ սպիով, վորպես հետևանք այդտեղ առաջ չեկած խոցի. այդ սպին կամ, ինչպես ընդունված է ժողովրդի մեջ ասել, «հատը» անցյալում վոչընչով չեր բուժվում, և կուրությունը համարվում էր անվերադարձ, մինչդեռ սրանից մոտ 20-25 տարի առաջ ակնարոժութունն առաջագրել է մի միջոց, այն է՝ ուրիշի այլ հիվանդութուններից առաջացած կուրյ աչքից, կամ նոր մահացածի նույնպես առողջ յեղջերաթաղանթից մի կտոր կտրել ու պատվաստել սպիացած յեղջերաթաղանթի փոխարեն, յեթե դրա համար կան համապատասխան նախադրյալներ, դարձրնել այն թափանցիկ, և այդպիսով լույս տալ աչքին, ի հարկե, չափազանց դժվար, մանրակրկիտ և նուրբ գործ է այդ. այդ ոպերացիայի տեխնիկային ակնարոժութունը դեռ լրիվ չի տիրապետել. այդ իսկ պատճառով այդ ոպերացիայի հաջողութունն այնքան էլ մեծ չէ. մեզնում ամենից շատ այդ ոպերացիան կատարվել է Ուեսսայում՝ պրոֆ. Ֆիլատովի ձեռքով, բայց նրա կատարած 90 ոպերացիայից միայն 14-ն է լավ հետևանք ունեցել: Մարդիկ, մասնավորապես վոչ բժիշկները, յենթադրում են, վոր կարելի չէ կուրյ աչքն հանել և փոխարենը պատվաստել վորևե կենդանու աչք, և իբր թե մարդը դրանով կտեսնի. սակայն այդ առասպել է. ճիշտ է՝ նման փորձեր արել են մասնագետները, նույնիսկ բացառիկ դեպք է յեղել, յերբ պատվաստած աչքը կենդան

թյունները համաձայն Հայաստանի տարբեր շրջաններում տրախոման տարբեր կոնֆիցիենտով և արտահայտված. նա տատանվում է 50-ի և 800-ի մեջ: Անկասկած, ակնարկով մասնագետների քիչ լինելը հնարավորութունն չի տալիս տրախոմայի դեմ ել ավելի ուժեղ պայքարելու. այդ խնդիրը հրամայողական պահանջ է դնում կադրեր պատրաստելու, մի գործ, վորի համար քիչ անելիք չունի մեր ակնարկովական կլինիկան: Այդ իսկ պատճառով այսօր յուրաքանչյուր բժիշկ, վորն աշխատում է շրջաններում, մասնավորապես տրախոմայով ավելի վարակված շրջաններում, պարտավոր է, անկախ իր մասնագիտությունից, լավ իմանալ նաև տրախոման և նրա դեմ մղվելիք պայքարի միջոցառումները:

Կուրությունն առաջացնող հիվանդութուններից առաջնակարգ տեղ է բռնում նաև ծաղիկը, ապա յեղջերաթաղանթի թարախոտ հիվանդութունները: Ծաղկի դեմ ամեն տարի կատարվող մասսայական պատվաստումները հանդիսանում են ծաղկի նախադուրացման ամենալավ միջոցը. այսօր շնորհիվ այդ հանգամանքի մեղ մոտ բացառիկ է ծաղկից առաջացած կուրությունը. սակայն այդ հիվանդութուններից առաջացած կուրյերի քանակն անցյալում չափազանց մեծ է չեղել:

Քիչ չեն նաև այն դեպքերը, յերբ կուրությունն առաջանում է յեղջերաթաղանթի բորբոքումից, մանավանդ յերեխայի ծննդյան ժամանակ մոր սուսանակից առաջացած վարակից. այսօր հնարավորութուն է ստեղծվել նախադուրացումով կանխել այդ

հիվանդութունը, յեթե նույնիսկ մայրը վարակված է նրանով:

Յեղջերաթաղանթի հիվանդութուններից առաջացած կուրության դեպքում այն ծածկվում է թանձրը. սպիտակ սպիով, վորպես հետևանք այդտեղ առաջ չեկած խոցի. այդ սպին կամ, ինչպես ընդունված է ժողովրդի մեջ ասել, «հատը» անցյալում վոչընչով չէր բուժվում, և կուրությունը համարվում էր անվերադարձ, մինչդեռ սրանից մոտ 20-25 տարի առաջ ակնարկովությունն առաջադրել է մի միջոց, այն է՝ ուրիշի այլ հիվանդութուններից առաջացած կուրյ աչքից, կամ նոր մահացածի նույնպես առողջ յեղջերաթաղանթից մի կտոր կտրել ու պատվաստել սպիացած յեղջերաթաղանթի փոխարեն, յեթե դրա համար կան համապատասխան նախադրյալներ, դարձրել այն թափանցիկ, և այդպիսով լույս տալ աչքին, ի հարկե, չափազանց դժվար, մանրակրկիտ և նուրբ գործ է այդ. այդ ոպերացիայի տեխնիկային ակնարկովությունը դեռ լրիվ չի տիրապետել, այդ իսկ պատճառով այդ ոպերացիայի հաջողութունն այնքան էլ մեծ չէ. մեղնում ամենից շատ այդ ոպերացիան կատարվել է Ուբեսայում՝ պրոֆ. Ֆիլատովի ձեռքով, բայց նրա կատարած 90 ոպերացիայից միայն 14-ն է լավ հետևանք ունեցել: Մարդիկ, մասնավորապես վոչ բժիշկները, յենթադրում են, վոր կարիլի յե կուրյ աչքն հանել և փոխարենը պատվաստել վորևե կենդանու աչք, և իբր թե մարդը դրանով կտեսնի. սակայն այդ առասպել է. ճիշտ է՝ նման փորձեր արել են մասնագետները, նույնիսկ բացառիկ դեպք է յեղել, յերբ պատվաստած աչքը կենդան

նի յե մնացել, բայց այդ աչքը լույս չի տվել և չի կարող տալ՝ տեսաներվի վրա գոյացած սպիացման պատճառով: Թե այս և թե նախորդ ոպերացիայի մասին չափազանց թյուր կարծիք ե տարածված մարդկանց մեջ. շատ հաճախ առասպելական բաներ են պատմում պատվաստման, կամ աչքը փոխելու մասին, բայց առաջին միջոցը դեռևս ավրում ե կատարելագործման դարաշրջանը, և ինչպես վերևում ասացինք, դեռևս չափազանց քիչ հաջողություն ունի, իսկ Զ-րդը բնախոսորեն դեռևս հիմնավորված չէ:

Մարդկանց մի այլ սովոր մասը կուրանում ե վոսպնյակի պղտորումից. այդ հիվանդությունը, վորը կոչվում ե կատարակտա, չափազանց տարածված ե ծերունի հասակում, առաջանում ե նաև ջարդրվածքներից և լինում ե նաև ի ծնե. բայց դեռևս 19-րդ դարում, առաջադրված ոպերացիայի միջոցով, այսոր հնարավոր ե լինում կատարակտայով տառապողներին 95 օ<sup>0</sup>-ից ավելին ազատել կուրությունից: Անբուժելի ե նաև այն կուրությունը, վորն առաջանում ե գլավկոմայից կամ, ինչպես արտահայտվում են ժողովրդի մեջ, սև ջուր հիվանդությունից: Միֆիլիսը, տուբերկուլոզը, մենինգիտը, յերբեմն մալերիան, գրիպը և այլ բազմաթիվ ընդհանուր հիվանդություններ առաջ են բերում տեսաներվի հետաճեցում, և առերես առողջ աչքը, ինչպես և սև ջուր հիվանդության ժամանակ, բացարձակ գրկվում ե տեսողությունից: Բազմաթիվ են կուրություն առաջացնող այլ հիվանդություններ ևս, վորոնք հաճախ սերտ կապված են ընդհանուր որդանի դի հիվանդությունների հետ, կամ նրանցից են առաջացած. նրանց ըմբռնելու համար հարկավոր ե

մասնագիտական կրթություն ունենալ, ուստի և առայժմ բավականաալ այսքանով:

Բուժական և նախազգուշացուցիչ (պրոֆիլակտիկ) միջոցառումն րի մանրամասն ուսումնասիրությունները բերում են մեզ այն համոզման, վոր չափազանց շատ են նաև այնպիսի դեպքեր, յերբ և վոչ մի միջոց չի կարող վերացնել կուրությունը. ահա և պատճառը, թե ինչո՞ւ Լուրություն դեմ պայքարելու գործում կուրերի կրթության և դաստիարակություն խնդիրը նույնպես պայքարի հսկայական միջոցառումներից մեկն ե:

Դեռևս 19-րդ դարում գերմանական ակադեմիոր ակնաբուժ պրոֆ: Բերն ասել ե՝ Վուլբր, վորպես քաղաքացի, մահացած ե: Կուրի հասարակական արժեքի այս գնահատականը բացարձակորեն հատուկ ե կապիտալիստական իրավակարգին: Յեթի մի հետադարձ ակնարկ ձգենք կուրերի դրություն վրա ցարական Ռուսաստանում, մենք կտեսնենք, թե այն ժամանակ ինչպիսի դժբախտ կյանք ունեյին կուրերը:

Մուրացիկ կուրերի շարանները սովորական չեբեվույթ եյին շուկաներում, չեկեղեցիների ու ձկնիթաների դռների մոտ, ուխտատեղերում և այ ուր, վորտեղ մարդկանց բազմությունը համեմատաբար շատ եր լինում ցնցոտիներով պատած, դոն դուռ ընկած, աղքատի տոպրակն ուսին, վոզորձություն եյին մուրում նրանք ամենուրեք՝ իրենց դժբախտ կյանքը մի կերպ քարշ տալու համար:

Կուրն արհամարհված եր հասարակության մեջ. նա գիտեը այդ և վիրավորված ինքնա իրությունը ինքն եր խուսափում հավաքություններից, մարդկանց հետ չը-

փում ունենալուց, նա գերադասում էր մենակյաց կյանք, վորովհետև նրան մարդու տեղ չեյին դնում: Նա ավելորդ բեռ էր հասարակության համար, իսկ ընտանիքում — հարավատների համար դժբախտություն էր:

Անկասկած զգայարաններից կարևորագույնի՝ աչքի կորուստը սահմանափակում է մարդու ընդհանուր զարգացման հնարավորությունները, սակայն զգայաբաններից մեկի բացակայությունը չի պայմանավորում մնացած բոլոր զգայարանների անգործությունը. ընդհակառակը մեկի բացակայությունը նպաստում է մնացած բոլորի գերազանց ոգտագործմանը ու զբանով իսկ փոխ հատուցվում է բացակայող զգայարանը:

Պատահական չե այս տեսակետից այն, վոր կուլյուրների շոշափելիքը կամ լսողությունը լավ զարգացած են լինում: Այ՛, հանգամանքը նույնպես հիմք է ավել վտմանց լենթադրելու, վոր կուլյուրն անպայման ոժտված են հանճարեղ լսողությունը, կամ շոշափելիքով. բայց այդ սխալ է, կուլյուրն ոժտված են մնացած զգայարանների նույն ընդունակությունը, ինչ չափով ոժտված է յուրաքանչյուր մարդ, անկախ կուլուրությունից. բայց նրանց զգայարաններից մեկի՝ աչքի բացակայությունը նպաստել է մնացածներին, մասնավորապես լսողություն և շոշափելիքի ավելի զարգանալուն, և այդ է պատճառը, վոր անցյալում կուլյուրների մեջ չափազանց հաճախ ելին պատահում յերգով ու սազով աշուղներ:

Աշուղը կարծես արևոնիմ էր հանդիսանում կուլուրության, վորովհետև կուլյուրներին հնարավորություն

չէր տրված իրենց ընդունակություններն ոգտագործելու հասարակական այլ ասպարիզում, բացի աշուղական միջավայրից:

Կուլյուրն ընդհանրապես ավելի յեն կարողանում չարել իրենց ուշադրությունը. այդ բացատրվում է նրանով, վոր կուլյուրը զուրկ լինելով տեսողության ակտի ավելորդ գրգիռից, կլանված ուշադրությամբ շարում է լսողությունը, մարմնանում նրա մեջ:

Ավանդությունն ասում է, վոր հունական փիլիսոփա Դիմոկրիտը դիտավորյալ կերպով հանել է յուր աչքերը, վորպեսզի ել ավելի կարողանա խորանալ փիլիսոփայական հարցերում, վորոնցով նա ըզբազվում էր. կուլուրություն լըր թե նպաստում էր նրա լսորմաստ դատողությունը \*): Սակայն չեթե իսկապես կուլուրությունս այդ աստճան բարենպաստ հանգամանք լիներ և զբական մի միջոց, ապա անցյալ դարերի բարբարոս աշխարհակալները, վորպես գերազույն պատիժ, չեյին հանի գերի ընկած թշնամի արքաների զուլջ աչքերը, վերջիններին հավիտյան դժբախտ դարձնելու դաժան տենչանքով: Կուլյուրի մանկավարժությունը, կամ գիտական լեզվով՝ փիլիսոփայագործիկան հանգում է այն չեզրակացություն, վոր ոգտագործելով կուլյուրի նորմալ աճած մյուս զգայարանները՝ կուլյուրներն ել հնարավոր է զարգացընել ու դարձնել հասարակության համար պիտանի անդամներ:

Կուլուրությունը կաշկանդում է մարդուն, կուլյուրն իր շարժումներով զառնում է անհամարձակ: զլյան

\*) Ըստ Սամոյլի:

նպաստում ե նաև այն, վոր շրջապատողներն ահով բռնված՝ արգելում են կույրերին ազատ շարժումներ կատարել, նրան փորձանքից ազատ պահելու նպատակով. այս հանգամանքն ավելի չե արտահայտված մասնավորապես այն կույրերի մեջ. վորոնք ծնվել են և ապրել առողջ աճերով և կորցրել են տեսողութունը կյանքի ընթացքում:

Կուրությունը հակադրելով անցյալ տեսողության, այդ կարգի կույրերը բնագրամբ չերկչոտ են լինում, խուսափում են շարժումներից: Ավելի նպաստավոր դրության մեջ են ի ծնե կույրերը, նրանք համարձակ շարժումներ են անում, ապա ընդունակ են շրջապատն ապելի ոգտագործել իրենց կարիքների համար: Յես հիշում եմ մի փաստ. սրանից 14 տարի առաջ Իրիշլանդում, գյուղից ցած, մի այդու մեջ մանկատուն կար (յիթե չեմ սխալվում, այժմ այդտեղ կաթնատնտեսական ֆերմա յե): Այստեղ մոտ 300 մանուկներ եյին ապրում. վորպես բուժող բժիշկ յես հաճախ ելի լինում նրանց մոտ. յերեխաներից մեկը, մոտ 8-9 տարեկան մի տղա, բացարձակ կույր եր, սակայն առաջին հայացքից, արտաքին տեսքով նա վոչնչով չեր տարբերվում առողջ աչքեր ունեցողներից. նա առույգ եր և աշխուժ. միայն ուշագիր դիտողը կարող եր նկատել, վոր նրա բաց հայացքը սառած եր, անկենդան, գուրկ տեսնող աչքերի կենդանի փայլից: Բայց իր շարժումներով բոլորովին չեր տարբերվում մնացածներից. նա համարձակորեն մագըլցում եր պատերի վրա, վազվզում եր նեղ շավիղներիով, բարձրանում եր հսկա ընկուզենին ու մեծ ճարպկությամբ, շոշափելով՝ չափազանց արագ պո-

կումբեր ընկուզները ճուղերից և ծոցը լցնելով ցած իջնում: Այդ արագավազ, ճարպկ, ճկուն և մագըցող յերեխան բոլորի հետ միասին, զանգի ձայնը լսելով՝ վազում եր ճաշարան, գտնում եր իր տեղը սեղանի առջև, ննջարանում՝ անկողինը, և այլն: Ինքնուրույն զարգացած այդ յերեխայի բոլոր վարժությունները մի ավելորդ անգամ գալիս են ապացուցելու, թե վճռյափ մեծ նշանակություն ունի շարժումների զարգացած լինելը, նրանց ֆիզիկական զարգացման համար, շրջապատին ծանոթանալու և այդ իրենց կազմում, շրջապատին ոգտագործելու: Ապացուցված ե, վոր բլքների համար ոգտագործելու: Ապացուցված ե, վոր յիթե զարգանում են կույրերի շարժումները և լսողությունը, ապա կարելի չե նրանց միանգամայն ընտելացնել տվյալ քաղաքի բազմամարդ փողոցների յերթևեկությանը, ելեքտրաքարշին, բազմատեսակ, բազմաձև մայթերին, շենքերին և այլն. կույրն այդպիսով տիրապետում ե շրջապատող միջավայրին ու շարժվում ե առանց չերկչոտության:

Ուսումնա ու դաստիարակությունը պայմանավորված են գրել-կարգալով: Կույրերի գիրը հարմարեցված ե նրանց շոշափելիքին և գոյություն ունի 19-րդ դարից: Փարիզում կույրերի ազգային ինստիտուտի դասատու Բրեյլի (1809-1852) այբուբենը հանրահայտ ե, նա այժմ գործադրվում ե ամենուրեք՝ կույրերի զարգացման համար: Այդ այբուբենի եյությունն այն ե, վոր զարգացման համար միջակայքը 2,5 միլիմետր հեռավորոնք, թվով 6 հատ, իրարից 2,5 միլիմետր հեռավորության վրա զանազան ձևերով դասավորելով, կարգում են տառեր: Հմուտ և վարժված կույր ընկերացողները շոշափելով՝ կարողանում են մեկ րոպե-

ցում մինչև 200 տառ կարգալ. այդ տառերով լրիվ ապահովվում են թե ձայնագրության և թե մաթեմատիկական ամենաբարդ ֆորմուլաների ուսումնասիրությունները: Այդ տառերով այժմ լույս են տեսնում 65 ամսաթերթ և որաթերթ, վորոնցից 3-ը ուսաներեն լեզվով:

Կուլյերի համար կատարելագործված այբուբեն ստեղծելու այն է՝ սովորական այբուբենը նրանց համար ընթեռնելի դարձնելու նպատակով՝ վերջերս կատարվում են չափազանց հետաքրքիր ուսումնասիրություններ. մասնավորապես մեզ մոտ, Լեոնինգրադում նշանակալից փորձեր և կատարել պրոֆեսոր Ռոզինգը. նրան հաջողվել է լուծել մի կարևոր խնդիր. — և չեքարական լույսի ոժանդակությամբ, հատուկ գործիքի միջոցով ընթեռնելի դարձնել տպած այբուբենը նաև կուլյերին:

Նման աշխատանք և կատարվում նաև Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Հեռու չէ այն որը, չերը կուլյրն էլ հնարավորություն կունենա տեսողությամբ ոժտվածներին համահավասար ոգտագործելու մեր գրադարանների բազմահատոր գրքերը:

Կուլյերի ուսումն ու դաստիարակությունը մինչև որս կատարվում է միմիայն նրանց համար ստեղծված փակ դպրոցներում: Վերջերս զանազան յերկրներում, մասնավորապես Ամերիկայի Միացյալ Նահանգներում ապացուցված է, վոր ննարավոր և կուլյերի ուսումն ու դաստիարակությունը համատեղել տեսող յերիխաների ուսման և դաստիարակության հետ, նորմալ դպրոցներում. այդ խնդրի լուծումը կախված է զլխավորապես դասավանդողից, վորը վորոշ մասնա-

գիտական ուսումնասիրություններից հետո ի վիճակի չէ լինում դասավանդումը կատարել կուլյերի և առողջների հետ միատեղ: Փորձերը ցույց են տալիս, վոր միատեղ դաստիարակությունը հնարավորություն է տալիս լայնորեն զարգացնելու կուլյերի ընդունակությունները և ընդհանուր կրթության հետ միասին քաղաքականապես ևս ավելի կրթված ու պատրաստված դարձնել կուլյերին:

Վերջապես համատեղ ուսումը վերացնում է կուլյերի և վոչ կուլյերի մեջ ստեղծված այն պատենշը, վորը մինչև որս անընդհատ ճնշել է կուլյերին, առանձնացնելով նրանց, խափանելով նրանց հասարակական ընդունակությունները, սահմանափակելով նրանց աշխարհահայացքը, քաղաքականապես յետ պահելով տեսողությամբ ոժտվածներից:

Տարեց-տարի աճում է կուլյերին Խորհրդային Միության բազմաթիվ գործարաններում ընդգրկելու աշխատանքը. 1933 թ. ընդգրկված էյին 24280 կուլյերեր:

Փորձի այս հսկայական կուտակումը մի կողմից, վոչ կուլյերի հետ միատեղ ուսումը՝ մյուս կողմից, կուլյերի առաջ բաց են անում մի նոր դաբաղջման:

Խորհրդային կարգերն այսօր պատմության արխիվն են նետում գերմանական պրոֆեսոր Բերի բուբ-ժուական այն տեսակետը, թե Վկուլյրը, վորպես քաղաքացի, մահացած է»: Կուլյրն այսօր բռնել է մեզ մոտ սոցիալիստական յերկրի գիտակից քաղաքացու ուղին և լծվելով մեր յերկրի վիթխարի շինարարությանը, մնացած քաղաքացիների հետ ձեռք-ձեռքի տված ստեղծում է իր նոր ու յերջանիկ կյանքը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1) Профессор Л. Г. Беллярминов и прив.-доц. А. И. Мерц — „Глазные болезни“ в трех частях, 1930 г., Ленинград.

2) Профессор А. Я. Самойлов и Н. Е. Браунштейн — „Введение в офтальмологию“, Биомедгиз, 1935 г.

3) Проф. С. С. Головин — „О слепоте в России“, Одесса, 1910 г.

## ՎՐԻՊԱԿ

Եջ	Տող	Տպված է	Պետ Ե ինի
9	վ. 5	վեց միլիոն մեկ աչքով կույրերից	բացի 6 մ. լիոն մեկ աչքով կույրերից




Պատ. խմբ. Արմ. Մալխասյան  
Տեխ. խմբ. Հ. Կարապետյան  
Մրբագրիչ Մ. Սուրյան

---

Գլավ. լիազոր Ս. № 1194  
Պատ № 1363, տիրած 2000  
Հրատ. 3939

---

Յերեվան, Գեորգյանի ազգաբան, II Գնուհանցի, № 4





ԳԻՆԸ 35 ԿՈՊ.



Դր Ե. ՄԵԼԻԿ-ՄՍՅԱՆ  
**Օ** սլեփոտե  
Դիվ ՍՍՐ Արմենի, Երևան, 1937



ԳԻՆԸ 35 ԿՈՊ.



Դր Ե. МЕЛИК-МУСЯН

**Օ** слепоте

Гиз ССР Армени, Ереван, 1937